

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունն սկզբունքորեն չի առարկի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Թևան Պողոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանտնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-567-15.07.2014-ՊԻ-010/0) ընդունմանը, եթե այն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համար լրացուցիչ ծախսեր չառաջացնի:

Նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Եզրակացություն

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է ապահովել Ազգային ժողովի, խորհրդարանական հանձնաժողովների դռնբաց նիստերի և խորհրդարանական լսումների ուղիղ եթերով առցանց հեռարձակում:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման
ազդեցության գնահատման**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է Ազգային ժողովի դռնբաց նիստերի ուղիղ եթերով առցանց հեռարձակմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ընդհանուր առմամբ ազդեցություն *չի նախատեսվում*:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
վերաբերյալ**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ընդունվելու կամ չընդունվելու

դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
 «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության
 օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի
 Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում
 կարգավորման

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չի առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Պ-567-15.07.2014-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 112-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ազգային ժողովի դռնբաց նիստերը, մշտական եւ ժամանակավոր հանձնաժողովների դռնբաց նիստերը, խորհրդարանական լսումներն ուղիղ եթերով առցանց հեռարձակվում են Ազգային ժողովի ինտերնետային կայքում: Առցանց հեռարձակումն իրականացնում է Աշխատակազմը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Առաջարկվող օրենքի նախագիծը կնպաստի ՀՀ Ազգային ժողովի մշտական եւ ժամանակավոր հանձնաժողովների գործունեության առավել հրապարակային լուսաբանմանը, որն էլ իր հերթին կհանգեցնի մշտական հանձնաժողովների գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ ՀՀ Աժ աշխատանքները դարձնելով առավել թափանցիկ:

Օրենքի նախագծի շնորհիվ ՀՀ քաղաքացիները հնարավորություն կստանան ինչպես հետեւել ՀՀ Աժ հանձնաժողովների աշխատանքային գործունեությանը, այնպես էլ՝ պարբերաբար տեղեկանալ հանձնաժողովների գործունեության հետ առնչվող պետական կառավարման համապատասխան մարմինների ՀՀ Ազգային ժողովում, որպես կառավարության ներկայացուցիչ հանդես եկող պետական պաշտոնյաների իրենց ոլորտին առնչվող օրենսդրական նախաձեռնությունների ներկայացմանը, ավելի մանրամասն իրազեկ լինել նրանց կողմից ՀՀ կառավարության համապատասխան օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ ներկայացվող փաստարկներին, հիմնավորումներին:

Հանձնաժողովների նիստերի առցանց հեռարձակումն օգտակար է նաեւ տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող մյուս պատգամավորների համար եւս, ովքեր հնարավորություն կստանան ՀՀ Աժ չորսօրյա նիստերի գումարումից առաջ օնլայն հետեւել օրենսդրական նախաձեռնությունների քննարկումներին, որն էլ իր հերթին կօգնի ավելի հեշտ կկողմնորոշվել այս կամ այն օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ դիրքորոշում արտահայտելիս:

Խորհրդարանական լսումների առցանց հեռարձակման շնորհիվ հանրությունը կկարողանա ամբողջությամբ հետեւել ծավալվող քննարկումներին եւ ոչ թե դրանց վերաբերյալ պատկերացում կազմել այս կամ այն լրատվամիջոցների համառոտ եւ երբեմն ոչ ամբողջական հաղորդումներից:

Նախագծի բուն նպատակն է. նպաստել հասարակության կողմից ՀՀ Աժ հանձնաժողովների աշխատանքների վերաբերյալ հասարակական վստահության մթնոլորտի ձեւավորմանը: Հանձնաժողովների նիստերի առցանց հեռարձակմամբ հնարավորություն է ստեղծվում նաեւ

առավել օբյեկտիվ գնահատել ՀՀ ԱԺ հանձնաժողովի անդամ հանդիսացող պատգամավորների գործունեությունը:

Խորհրդարանական հանձնաժողովների դռնբաց նիստերի եւ խորհրդարանական լսումների առցանց հեռարձակումը կնպաստի օրենսդիր եւ գործադիր մարմինների համագործակցության արդյունավետության բարձրացմանը՝ վերջինիս հաղորդելով նոր որակներ: